


## Զավեն Խտրճյան. Երազ հայթայթող արվեստագետը



Վերջերս 96տ. հասակում իր մահկանացուն կնքեց լիբանանահայ նշանավոր քանդակագործ Զավեն Խտրճյանը: Նրա աշխատանքներին ծանոթանալու առիթը կայացավ տարիներ առաջ, երբ «Լիբանանի հայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակում Երևանի պատմության թանգարանում բացվեց արվեստագետի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը:

«Արվեստագետն աներազ մարդու երազ հայթայթողն է»,- մեր զրույցում այսպես բանաձևեց արվեստագետի անելիքը Զավեն Խտրճյանը: Ինքն էլ երկար տասնամյակներ ապրեց նույն առաքելությամբ՝ իր երազներն ու իղձերն արտահայտելով քանդակային ձևերի մեջ ու դրանց միջոցով:

Ծնվել էր Բեյրութում, նախնական կրթությունը ստացել տեղի ազգային Սահակյան վարժարանում և Համազգայինի «Նշան Փալանջյան» ճեմարանում, ապա հաճախել Բեյրութի Գեղարվեստի ակադեմիա: Ուսումը շարունակեց Փարիզի Ազգային բարձրագույն արվեստների դպրոցում՝ մասնագիտանալով դիմաքանդակի և կոթողային արվեստների բնագավառներում: Նրա ուսուցիչների թվում են եղել Հյուբերտ Յանսեսը, Մարսել Ժիմոն, Ալֆրեդ Ժանիոն: Ուսանող էր, երբ 1954-ին

ցուցադրվեց «Փռթի փալե» հռչակավոր ցուցասրահում: Արդյունքում հաջորդ երկու տարիներին ստացավ Փարիզի Գեղարվեստի դպրոցի երկու մրցանակները:

Փոքրուց էր երազել կոմպոզիտոր դառնալ. շատ էր սիրում դասական երաժշտություն: Տարիներ անց էլ հիշում է Բուրջ Համուդի խանութներից մեկի անկյունում ընկած այն սկավառակը, որը պիտի տուն տաներ ու ամեն իրիկուն լսեր Իզոր Ստրավինսկու կախարդական մեղեդիները: Հայրը, սակայն, չի խրախուսել «օդային» այդ զբաղմունքը: Բայց և դեմ չի եղել որդու քանդակագործ դառնալու ցանկությանը. դա արդեն իսկական տղամարդու գործ է, որն ամենօրյա կռիվ է ենթադրում քարի ու մետաղի հետ: Ու տարիներ անց նա հենց քանդակի միջոցով էր արտահայտելու իր չկորսված սերն առ նորին մեծություն երաժշտությունը:



1964-ին ծննդավայրում Չավեն Խտրշյանը բացում է իր առաջին անհատական ցուցահանդեսը: Հաջորդ տարի էր, որ գաղթական ծնողների զավակը Բեյրութին մերձակա Բիքֆայա բարձունքին վեր խոյացրեց 1915-ի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողը: Այն գաղթի ճամփեքին երկու քույր և անհաշիվ հարազատներ կորցրած հայորդու հոգու ճիչն ու սրտի բողոքն էր՝ ուղղված դեպի երկինք:

Չավեն Խտրշյանը կոթողային այդ հուշարձանից հետո միանգամից հայտնի անուն դարձավ ողջ հայ սփյուռքում: Նրան վստահվեց Գարեգին Նժդեհի կիսանդրին Բոստոնում, Շավարշ Միսաքյանի արձանը Այնճարում, Ժըպրան Խալիլ

Ժըպրանի կիսանդրին Բեյրութի՝ նրա անունը կրող զբոսայգում, ինչպես նաև «Պաշտպանություն» հուշակոթողը Բեյրութի հայահոծ Բուրջ Համուդ թաղամասի կենտրոնական հրապարակում:

Այդուհանդերձ երբեք չշտապեց շահարկել իր անունը՝ իջնելով կոմերցիոն արվեստի մակարդակի: Շատ դժվարությամբ էր բաժանվում գործերից, որոնք հարազատանում էին իրեն: Ծերունագարդ վարպետը շատ է սիրում կրկնել. «Արձանիս շոշափելը նույնն է, թե մարմինս կշոշափեմ»: Շատ անգամներ նույնիսկ բարձր գին է դրել, որպեսզի չգնեն: Գնել են... սակայն:

Ընտանիքն ապրեցնելու համար Խտրշյանը հիմնականում պատվերներ կամ, ինչպես ինքն է ասում, «ապսպրանք» է վերցրել: Միաժամանակ «Ճարտարապետություն» առարկան է դասավանդել Բեյրութի Գեղարվեստի ակադեմիայում: Ի դեպ, նա դասավանդման նոր ծրագրի հեղինակն է:


Հետաքրքիր են նրա դատողությունները քանդակագործության ու ճարտարապետության համեմատության շուրջ: Վերջինս, ըստ նրա, «բնակելի քանդակ է, իսկ քանդակը՝ անբնակ ճարտարապետություն»:

2012-ին բացված երևանյան ցուցահանդեսը կոչված էր ներկայացնելու Ջավեն Խտրշյանին իր հայրենակիցներին: Չէ՞ որ նա հասցրել էր արժանի ճանաչում ձեռք բերել թե՛ Լիբանանում, թե՛ Մերձավոր Արևելքում և թե՛ Եվրոպայում: Այսպես. Ֆրանսիայի հանրահայտ «Larousse» հրատարակչության լույս ընծայած «L'art et le monde moderne»՝ «Արվեստը և արդի աշխարհը» հանրագիտարանում աշխարհի մեծագույն արվեստագետների կողքին հիշատակված էր նաև նրա անունը: Իսկ Բեյրութում տարիներ առաջ լույս տեսած Սեզարի «Քանդակագործությունը Լիբանանի մեջ» հանրագիտարանային աշխատության շապիկին մեր հայրենակցի աշխատանքներից մեկի վերատպությունն էր պատկերված: Մեջբերենք նաև նրա արվեստի մասին լիբանանցի ժամանակակից քննադատ Ժոզեֆ Թարրայի հետևյալ դիպուկ դատողությունը. «Խտրշյանի ստեղծագործական կերպը հիմնված է պարուրողի և պարուրվածի տրամախոհության վրա»:



Ջավեն Խտրշյանի ստեղծագործություններն իրենց ողորկ մակերեսներով և ծավալային ինքնատիպ լուծումներով ակնհայտ երաժշտական հնչեղություն ունեն: Բնական է ընթացել իրապաշտ արձանագործությունից դեպի վերացարկված-նճավորված քանդակագործություն տանող ճանապարհը:

Հեղինակը քանդակի սահմանափակ լեզվով կարողացել է հայրենասիրական վեհ զգացումներ ու գաղափարներ արթնացնել: Թվարկենք մի քանի վերնագիր միայն. «Հայաստանի անկախությունը», «Արցախի ազատագրումը»: Վերջինս, օրինակ, աջ ձեռքը վեր՝ դեպի դրոշը պարզած ազատատենչ մարտիկի կերպար է մարմնավորում: Ջարմանում ես, թե ի՞նչ պլաստիկա կա և այդ պլաստիկայի մեջ՝ ազատության ի՞նչ տենչ... Աշխատանքը 80-ամյա վարպետն ուզում է տեղադրված տեսնել Լեռնային Ղարաբաղի որևէ անկյունում, ու դրա համար մեկնեց Արցախ՝ որոնելու բարձրադիր մի վայր:



Նրա հայտնի կոմպոզիցիաներից առանձնացնենք նաև «Ասթարթե աստվածուհին» ստեղծագործությունը, որը կերպավորում է Արա Գեղեցիկի ու Շամիրամի սիրավեպի փյունիկյան տարբերակը: Ասթարթեն, ըստ փյունիկյան դիցաբանության, երկինքների աստվածուհին է և պատկերված է ճախրանքի պահին:

Զավեն Խտրշյանի գործերն ընդհանրապես հատկորոշվում են բնորդի՝ երկրից դեպի երկինք սլացքը հավերժացնելու կարողությամբ և այդ սահմանագիծը հաղթահարել փորձող հերոսի կերպավորմամբ:

Լևոն Լաճիկյան